

զարծաթ¹ ընտրեալ եւ փորձեալ յերկրէ^ա։ Եւ զասելն յերկրէ՝ գիտասցես, եթէ զերեւումն Որդւոյն Աստուծոյ մարմնով² ի սուրբ կուսէն յայտ առնէ մարգարէն։ 52 Եւ զի երեւեցաւ քեզ ծովագոյն սառնանման տեսիլ աթոռոյն՝ նշանակեալ ցուցանէ զծփումն ալիկոծութեան աշխարհիս Զայոց։ 53 Զանգի եւ թխագոյն թանձր կտաւոցն ծածկումն՝ զաւրինակ բերէ զթանձրամած սգոյն, որ ունելոց է զաշխարհս ամենայն։ Վասն զի տեսիլդ ի վախճան է։ 54 Եւ նափորտն բեհեզեայ, զոր տեսանէիր ծալեալ եւ եղեալ ³ի վերայ սկտեղն, եւ գունդն ոսկի որ կայր մերձ նափորտանն՝ նշանակէ մինն զքահանայութիւնն, եւ միւսն զթագաւորութիւնն։ 55 Եւ զի ոչ ոք էր արկեալ զիրեաւ զնափորտն, եւ ոչ այն ոք էր որ զգունդն ուներ ի ձեռին՝ լո՛ւր ստուգապէս, զի լռեսցէ մերձ ընդ մերձ թագաւորութիւն յազգեդ Արշակունեաց, եւ քահանայութիւն ի ցեղէ արժանաւոր քահանայապետին Գրիգորի։

56 «Եւ մագաղաթն⁴ հատուածածէ⁵, որ ցուցաւ քեզ գրեալ ի սկզբանն կարգս ինչ ոսկեղէն գրով՝ զձեռնադրութիւն արանց սրբոց եցոյց քեզ շնորհք Զոգւոյն սրբոյ, որք ի զաւակէ երանելոյն⁶ Գրիգորի յաջորդեսցեն⁷ արժանապէս զաթոռ քահանայապետութեան։ Նոքա են արք ընտիրք, գրեալք ոսկեւ տեսիլ գրով ի դպրութիւն կենաց։ 57 Եւ զի երեւեցաւ ի միջոյ կողմն մագաղաթին, հեռի յոսկեգիր կարգացն, կարգք ինչ խանգարեալք⁸ եւ ջնջագիրք⁹՝ գիտեա՛, զի նստելոց են քահանայապետք ոմանք յաթոռ սրբոյն Գրիգորի, ¹⁰որք ոչ ըստ հրամանի սրբոց առաքելոցն եւ ոչ ըստ կանոնի սուրբ ժողովոյն երեքհարիւր ութուտասանիցն¹¹ լինին ձեռնադրեալք յերկնաւոր պատիւ¹², այլ ըստ փառաց աշխարհիս ¹³ձգտին ի պատիւն¹⁴ յանդնութեամբ, որք են արծաթասերք առաւել քան աստուածասերք։ 58 Եւ վասն զի խոտան է քահանայութիւնն¹⁵ եւ ոչ ըստ հաճոյից¹⁶ Բարձրելոյն՝ ջնջեալ են նոքա ի

1 ՁԱտ. իբրեւ զարծաթ

ա Սաղմ. ԺԱ 7

2 Ձ. չիք մարմնով

3 ՁԱտ. ի վերայ սկտեղին... կայր ի վերայ նափորտին

4 ՁԱտ. այստեղ եւ յետոյ՝ մագաղատ

5 Ձ. հատածէւ. ԲԳտ. հատածածէւ

6 ՏՏ. երանելոյն

7 ԲԳտ. յաջորդեն

8 Ձ. կարգ ինչ *խանգարեալք...

9 Ատ. կարգ ինչ խանգարեալ եւ ջնջագիր

10 ԲԳտ. որ ոչ... պատուական սուրբ ժողովոյն

11 ԲԳտ. ութուտասանցն

12 ԲԳտ. յերկնաւոր պաշտօն

13 Ձ. ձգտին... որք արծաթասերք առաւել են քան

14 ՁԱտ. չիք ի պատիւն

15 ԲԳտ. խոտան եւ օտար է քահանայապետութիւնն

16 Ձ. ոչ հաճոյից